ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Հայկ Օհանյան, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթների համակարգող խորհրդական:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Թբիլիսի (Վրաստան), 2023 թվականի հուլիսի 10-ից մինչև հուլիսի 14-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Ասիական Զարգացման Բանկ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կլիմայական լուծումների բացահայտում» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

1) Համապարփակ կլիմայական քաղաքականություն,
2) Երկարաժամկետ ռազմավարության նախապատրաստում և ներդնում, կլիմայի ազդեցության հետևանքների մեղմման պլանավորման մեջ հարմարվողականության և կայունության ինտեգրում,
3) Կլիմայական ռիսկերի կառավարում, հարմարվողականություն և կայունություն նրանց նկատմամբ,
4) Կլիմայական ֆինանսավորման սահմանում և հետևում,
5) Մասնավոր հատվածի ներդրումների արագացում, մասնավորապես՝ մասնավոր հատվածի ներդրումների հիմնական խոչընդոտները և վերջիններիս արագացման որոշումները,
6) Փարիզյան համաձայնգիր, կլիմայի փոփոխության ընթացիկ ծրագրեր և ռեգիոնալ համագործակցություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի Հանրապետությունից հանդիպմանը մասնակցում էին Ֆինանսների, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում երկրների ներկայացուցիչներին տրվեցին հանձնարարականներ, որտեղ յուրաքանչյուր երկիր ներկայացրեց իր տեսակետը նշված հարցադրումների վերաբերյալ: Աշխատաժողովի ընթացքում, հակիրճ ներկայացվել է կլիմայի փոփոխության հնարավոր մակրոտնտեսական ազդեցությունը ՀՀ-ի վրա, առանձին հարցեր չեն քննարկվել:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Երկրների ներկայացուցիչները փոխանակվում էին իրենց փորձով: Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում քննարկված թեմաները և ձեռք բերված գիտելիքները օգտակար կլինեն կիրառել Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության գործառույթներից բխող կլիմայական ռիսկերի կառավարման համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Հայկ Օհանյան
18.07.2023